



24 Մարտ 1990, Լատինաց Ամեն. Պատրիարք Միշել Սապպահի
այցելությունը նորըմտիք
Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին:



26 Մարտ 1990, Պատրիարքի ըմտրութեան առիթով հիւրասիրութիւն
Միւսրամութեան, Պատրիարքարանի պաշտօնէից, Ռսուցիչներու,
Կազմակերպութեանց վարչութեանց մասնակցութեամբ:



23 Մարտ 1990, Նորբնտիր Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին առաջին
այցելու թիւ մը Զուճաց Ամեն. Պատրիարք
Թեոդորոս Ա-ին:



23 Մարտ 1990, Նորբնտիր Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին առաջին
այցելու թիւ մը Լատինաց Ամեն. Պատրիարք
Միշել Սապակիին:



Մարտ 1990, Յուճաց Ամեն. Պատրիարք Թեոդորոս Ա-ին այցելութիւնը
նորըմտիւր Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքին:



23 Մարտ 1990, Նորըմտիւր Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարքի
առաջին այցելութիւնը Ս. Տեղեաց Ֆրանսիսկեան
Միաբանութեան:



15 Մայիս 1990, Ամեն. Ս. Թորգոմ Պատրիարքի շնորհակալության
խօսքը ուղղեալ Իսրայէլի Կրօնից նախարար
Զէվէլուն Համմէրին:



16 Մայիս 1990, ընդհանուր Զինուորական կառավարիչ Էրես Շալքի
այցելութիւնը Ամեն. Ս. Թորգոմ Պատրիարքին:

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

JERUSALEM





ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՏՆՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 49-29

Թվական
Date

2 Յունիս 1990

Կ Ո 2

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՄ

1990 Սեպտեմբերին Երուսաղեմի ծառանգաւորաց Վարժարանը պէտք է վերսկսի դասաւանդութեանց: Սակայն մեր մտահոգութիւնը մեծ է: Այս մտահոգութեան պատճառը թէ՛ աշակերտութեան թիւը եւ կրթական մակարդակն է, եւ թէ ուսուցչական կազմին որակը:

1) Ունինք երկու ձեռնադրեալ սարկաւազներ որոնք չորրորդ տարին աւարտած կը նկատուին եւ որոնց յայտնած ենք մեր ծրագիրը, եւ սկսած են Անգլերէն լեզուն սորվիլ քննութեան պատրաստուելու համար, որպէսզի կարենան բարձրագոյն ուսումնարանի մը կողմէ ընդունուիլ:

Անգլերէն լեզուի դաստիարակ մը նշանակած ենք իրենց իբրեւ մենտոր:

2) Յաջորդ բարձրագոյն դասարանը ունի միայն մէկ աշակերտ, 20 տարեկան, Հնծայարանի Ա. տարուան անունով:

3) Ծառանգաւորաց Ե. դասարանը եւս մէկ ուսանող ունի, 20 տարեկան:

4) Դ. դասարանը ուսանող չունի:

5) Գ. դասարանը եւս մէկ ուսանող ունի, 17 տարեկան:

6) Բ. դասարանը ունի չորս աշակերտ 15-17 տարեկան:

7) Ա. դասարանի մէջ ունինք ութ աշակերտներ 14-15 տարեկան:

8) Նախապատրաստական դասարանին մէջ ունինք տասը մէկ աշակերտներ 12-14 տարեկան:

2եզի կը դիմենք, եւ ձեր միջոցաւ բոլոր վարժարաններու տեսչութեանց եւ դաստիարակներու, ինչպէս նաեւ կոչ կ'ընենք ծնողներուն, որպէսզի տարբեր տարիքի եւ ուսումնական մակարդակի ուսանողներ ղրկէք Երուսաղեմ:

ՓՈՍՏԱՐԿՂ 14001 ՀԵՌԱՉԱՅՆ 282331 ԵՐՈՒՍԱԴԵՄ ԻՍՐԱԵԼ
P.O.Box 14001. PHONE: 282331. JERUSALEM. ISRAEL.



ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՏԻ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 49-29

Քուսակա

Date 2 Յունիս 1990

Ուսուցչական կազմը պատրաստուած դաստիարակներով օժտելու համար արդէն իսկ տպահոված ենք Հայագիտական դասանիւթերու մասնագէտ դաստիարակի մը աշխատակցութիւնը: Ամենայն Հայոց Հայրապետի, Նորին Ս. Օծուիւն, Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի հաւանութեամբ, ժեմարանի դաստիարակներէն Գր. Գէորգ Բաղդիշեան, Սեպտեմբերին պիտի ժամանէ եւ պիտի ստանձնէ "Արեւմտահայերէն լեզուի", "Հայ Մատենագրութեան", "Հայ Գրականութեան" եւ "Գրաբար Լեզուի" դասանիւթերը:

Տքթ. Յակոբ Ներսոյեան եւ իր տիկինը՝ Մարի, պատրաստակաւ են երուսաղէմ գալու եւ իրենց մասնագիտութիւնը ի սպաս դնելու մեր դաստիարակչական ծրագիրներու իրագործման համար:


Տքթ. Յակոբ Ներսոյեան փիլիսոփայութեան եւ Աստուածաբանութեան մասնագէտ, յանձնառու է իմաստասիրական եւ կրօնական դասանիւթերը աւանդելու: Լաւագոյն կարգադրութիւնը պիտի ըլլայ քաղաքագոյն ուսումնարաններու հետեւող ուսանողներ ղրկել երուսաղէմ կազմելու համար առանձին դասարաններ, մասնագէտ դաստիարակներու հսկողութեան ներքեւ:

Տարբեր համալսարաններու մէջ պաշտօնավարող դաստիարակներ կան որոնք համաձայն են ըստ պահանջի ու կարգադրութեան ուսուցանելու մեր վարժարանի մէջ:

Մեր հոգեւորականներէն ոմանց եւս քաջաւերած ենք զանազան դասանիւթեր ընտրել, որոնց մէջ մասնագիտանալու համար խոստացած ենք օժանդակել իրենց որպէսզի դաստիարակուին եւ ապա վերադառնան իրենց հոգեւոր Տունը եւ դաստիարակչական աշխատանքի լծուին:

Տիրոջ ողորմութեան եւ օրհնութեան ապաւինելով, դաստիարակչական մեր գլխաւոր պարտականութեան կատարման ձեռնարկած ենք, յուսալով ստանալ ձեր քաջաւերանքը եւ մեր ժողովուրդին օժանդակութիւնը:

Ձեր աղօթքը կը խնդրենք որ Աստուած օրհնէ մեր ջանքերը:

Սիրոյ ողջունիւ,

 Թորգոմ Արքեպս. Մանուկեան
 ՊԱՏՐԻԱՐԿ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ

ՓՈՍՏԱՐԱՆ 14001 ՀԵՌԱՋԱՅՆ 282331 ԵՐՈՒՍԱԼԵՄ ԻՍՐԱԵԼ
 P.O.Box 14001. PHONE: 282331. JERUSALEM. ISRAEL.



ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՏԻ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 71-15

Թուական
Date 22 Յունիս 1990

Միաբանակից եղբայրներ,

Այս առաջին տեղեկատվությունն նպատակն է մասամբ ներկայացնել ձեզի Երուսաղեմի մեր Պատրիարքարանի իրաց կացութիւնը, այնպէս ինչպէս զանոնք մենք զտանք 1990 Մարտ 22ի Պատրիարքի ընտրութենէն յետոյ, ինչպէս նաեւ մի քանի անմիջական բայց ոչ վերջնական կարգադրութիւնները՝ զորս անհրաժեշտ էր կատարել այս շրջանին:

Իացայայտ պատճառներով, այնքան ալ պարզ եւ հեշտ չէ Պատրիարքարանի զանազան բաժանմունքներու մէջ որոշ փոփոխութիւն եւ կարգադրութիւն ներմուծել, ինչպէս դուրսէն դիտողներ առ հասարակ կը մտածեն եւ կը թելադրեն: Բայց այնուամենայնիւ, զործակցութեամբ մեր միաբանութեան անդամներուն եւ Տնօրէն թողովին, կարելի եղաւ կատարել մի քանի փոփոխութիւններ որոնք նախաբայլեր են ամբողջական, համակարգ եւ կազմակերպեալ դրութեան մը հասնելու համար:

Յայտնեցինք ձեզի հսրայէլի կառավարութեան պաշտօնական մանաւումը Պատրիարքի ընտրութեան: Յորդանանի կառավարութեան պաշտօնագիրը տակաւին չենք ստացած: Մեզի յայտնած են թէ կարգադրութիւններ կը կատարուին որոշ թուական մը ապահովելու որպէսզի անձամբ Յորդանանի մայրաքաղաքը, Ամման, այցելենք, անձամբ ստանալու համար պաշտօնագիրը: Մինչ այդ մենք կը հետապնդենք մեր Պատրիարքութեան զործերը, տնտեսելու եւ կազմակերպելու մեր ծրագիրները:

1) Կալուածներու կացութիւնը -

Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը ժառանգաբար տէրն է քաղաքի արժէքաւոր կալուածներու, թէ նափայի եւ մամլէ քաղաքի, թէ Բեթղեհէմի եւ հին ու նոր Երուսաղեմի, եւ այլ վայրերու մէջ:

Երեք ամիսներէ ի վեր կրջանանք հաւաքել եւ ցանկագրել ամբողջ վանքապատկան կալուածները իրենց հասցեով, վարձակալներով, ներկայ տարեվարձով, եւ պայմանագրերով: Դժբախտաբար տակաւին չենք կարողացած զանոնք ամբողջացնել: Կալուածներու հոգատարութիւնը յանձնուած էր նշանակութեամբ երեք տարբեր պատասխանատուներու, որոնք զործած են իրարմէ անկախաբար եւ անտեղեակ: Առանց կեղորոշացեալ համարատուութեան:

ՓՈՍՏԱՐԿՂ 14001 ՀԵՌՈՍԱԼԱՅՆ 282331 ԵՐՈՒՍԱԼԵՄ ԻՍՐԱԵԼ
P.O.Box 14001. PHONE: 282331. JERUSALEM. ISRAEL.



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՏՆՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 71-15

Թվական
Date

22 Յունիս 1990

Կալուածներու ստորագրուած պայմանագիրներն եւս պահուած են տարբեր տեղեր եւ տարբեր անձերու մօտ: Կատարուած ատուծախերուն մէջ իրարմէ նոյնպէս անտեղեակ:

Ներկայիս նշանակած ենք երկու երիտասարդներ, գիտակից եւ կարող, որոնց յանձնած ենք պարտականութիւնը ցանկագրելու ամբողջ տեղեկութիւնները կալուածներու մասին, հետապնդելով նաեւ ինչ որ պատրաստ եւ տրամադրելի չէ, կազմելու համար ամբողջական տեղեկագիր մը եւ ներկայացնելու համար ճշգրիտ պատկերը ներկայ կացութեան:

Ընդհանրապէս ենք Հոգ. Տ. Յուսիկ Ժ. Կրդ. Պաղտասեանին, Հոգեւոր հովիւը Ս. Աստուածածին եկեղեցւոյ, Նիւ ժըրզիի Լիվինկսթըն քաղաքի, որ այս աշխատանքին նախածնունդն է, երբ Մարտ ամսու մէջ երուսաղէմ կը գտնուէր նոր Պատրիարքի ընտրութեան մասնակցելու համար:

Առաջին առիթով որ անձամբ շրջեցանք մեր կալուածները աչքէ անցնելու համար, տեղեկացանք եւ տեսանք թէ մեր կարգ մը անխնամ թողուած եւ բաց հողերուն վրայ հաստատուած են բնակիչներ: Ասոնք ապօրէն կերպով նաեւ կը շահագործեն մեր հողերը: Մեր փաստաբաններուն հրահանգուած է օրինաւոր դատ քանալ այսպիսի անձերու դէմ:

Տեղական թերթերու մէջ եւս երբեմն ակնարկութիւններ կը կարդանք թէ Հայոց Պատրիարքարանը իր կալուածներէն ոմանք ծախելու մտադիր է: Հետաքրքրուողներուն եւ թղթակիցներուն մեր հաստատակամ պատասխանը եղած է, որ երուսաղէմի Հայոց Պատրիարքարանը ոչ մէկ դիտում ունի իր կալուածներէն որեւէ մէկը ծախելու:

Իբրեւ կրօնական հաստատութիւն եւ Սուրբ Տեղեաց պահպան Միաբանութիւն, եւ հոգատարը կտակուած կալուածներու, Պատրիարքարանը զանոնք օգտագործելու պարտաւորութիւն ունի եւ ոչ թէ ծախելու:

Վտանգներ կան սակայն անխնամ թողուած մեր հողերը կորսնցնելու: Խափանելու համար նման հաւանականութիւն մը, պարտինք քաջալերել տեղացի եւ այլ երկիրներէն շինարարներ որպէսզի իրենց դրամազուլուր շահարկեն մեր կալուածներուն վրայ շինարարութեամբ, արդիւնաբերական, բնակարանային եւ կամ երկրագործական նպատակներով:

Անձկութեամբ կը սպասենք լսել, եւ ուրախ պիտի ըլլանք եթէ իրենց դրամազուլուր շահարկողներ փափաքին անձնապէս այցելել, ստուգել եւ քննել մեր հողերը եւ իրենց ընտրութիւնը կատարել:

Վառավարութիւնը քաջալերած է այլ երկիրներէ շինարարներ եւ իրենց դրամազուլուր շահարկողներ, անոնց հայթայթելով հրապուրիչ եկամուտ: Այս մասին աւելի մանրամասնութիւններ կարելի է ձեռք բերել պետական համապատասխան բաժանմունքներէն:



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿՈՆ ՆԱԽՈՅ

ARMENIAN PATRIARCHATE

71-15

Թուական

Date 22 Յունիս 1990

2) Միաբաններու քննութեան պայմաններու բարելաւում:-

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամները տարին երէ ի վեր կ'ապրին շատ ժուժկալ պայմաններու ներքեւ, "Գաղջաթաղ" կոչուած վարդապետաց քննութեան թաղամասին մէջ:

Նախորդող սերունդներու ժամանակ քնակարանային եւ առողջապահական պայմանները զուցէ բաւարար էին: Սակայն ներկայ դարու բոլոր գիտական եւ այլ յառաջդիմութեանց բարիքները աւելի գերազանց են քան ինչ որ մեր մեծ հայրերը կամ մինչեւ իսկ մեր ծնողքները կրնային վայելել: Այս պատճառաւ անհրաժեշտ կը դառնայ կարգ մը փոփոխութիւններ կատարել:

Մեր միաբան եղբայրները կ'ապրին գրեթէ խուցերու մէջ որոնք զուրկ են շոգուցումէ, ուր չկայ լուսցուելու կարելիութիւն, ուր լուսաւորութիւնը անբաւարար է, եւ որոնք կը գործածեն հասարակաց զուգարաններ եւ բաղնիք, նախորդ դարու սովորութիւններ յիշեցնող: Ամբողջ միջնորդութեամբ է ֆիզիքական եւ հոգեկան զոհումներէն առթելէ: Եւ մեր վանականներուն պէտք է տանք նուազագոյն հանգստաւէտ պայմանները:

Վանքին շէնքերէն շատերուն նման, վարդապետաց թաղը եւս կանոնաւորապէս չէ հոգատարուած: Ինչ որ պարտէզ պիտի նկատէինք, կանաչութենէ աւելի մոլեխոտերու լքուած շերտի մը կը նմանի:

Ժրագիրներ մշակուած են վարդապետաց քնակարանները բարելաւելու: Ժրտարապետի մը հետ համաձայնած ենք, որ մինչեւ Օգոստոս պիտի ամբողջացնէ մանրամասնեալ գծագրութիւնները կատարուելիք բարեփոխութեանց: Տնօրէն ժողովին կողմէ այս գծագրութիւններուն վաւերացուելէն յետոյ, վերաշինութեան աշխատանքները պիտի սկսուին:

3) Աստուածաբանական վարժարանը.

Այլեւս եւ Մարի Մանուկեան Աստուածաբանական վարժարանը կարիք ունի վերակառուցման եւ կարգաւորութեան: Ոչ միայն շէնքը որ լքուած ու մաշած է (եւ մինչեւ իսկ անաւարտ մնացած է), այլ նաեւ կրթական դրութիւնը՝ որուն կը պակսի դաստիարակչական անհրաժեշտ մակարդակը:

Մենք արդէն իսկ ղրկած ենք մեր կոչը Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլոր թեմերուն, ներառեալ այն Արաբ պետութիւնները որոնց հետ կարող չենք ուղղակի յարաբերութիւն ունենալ, ինչորեւոք որ ուսանողներ առահովքն մեր ժառանգաւորաց վարժարանին համար: Նաեւ Հայ հասարակութեանց ղեկավարներուն եւ հայ թերթերուն յայտնած ենք կարիքը մեր վարժարանի աշակերտներուն թիւը բազմացնելու:



ՊԱՏՐԻԱՐԷԱՐԷՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 71-15

Թուական

Date

22 Յունիս 1990

Նրուսաղէմի ժողանգաւորաց վարժարանը աւանդաբար նկատուած է սփիւռքի եկեղեցւոյ ամենէն կարեւոր ամրոցը եւ հաստատ ու յարատեւ հայթայթիչը ուսեալ եւ հոգեոանդն եկեղեցականներու, ծառայելու համար աշխարհի ամէն կողմերը ցրուած հայկական համայնքներու մէջ: Բայց իր առաքելութիւնը շարունակելու համար ան պէտք ունի թարմ մտքով ու հոգիով զինուորեալներու: Ներկայիս սենք ակնկառոյց կը սպասենք տասներկուրէն մինչեւ քսաներկու տարեկան երիտասարդներու զինուորա-գրման:

Ասոնց պակասին հետեւանքով վարժարանիս կարգ սը դասարանները առանց աշակերտի են մնացեր: Անցնող տասնամեակէն շորս ձեռնադրուած եկեղեցականներ ունինք, զգալի բաց մը թողնելով մեր Միաբանութեան շարքերուն մէջ:

Ալեքս եւ Մարի Մանուկեան վարժարանը շինուած էր հարիւր ուսանող տեղաւորելու հաշիւով: Ներկայիս հազիւ քսանէն քիչ մը աւելի ուսանողներ ունինք, մեծաւ մասամբ Լիբանանի պատերազմին հետեւանքով գաղթական կամ ծնողազուրկ:

Մենք ցանկացող ենք որ մեր ներկայ երկու աւարտող սարկաւազ-ները հետամուտ ըլլան բարձրագոյն ուսումի: Այս նպատակով կարգադրութիւն եղած է զանոնք պատրաստելու պահանջուած ուսումնական մակարդակին:

Մեր ակնկալութիւնն է որ այս երիտասարդները Նրուսաղէմ վերադառնան, իրենց ուսումը աւարտելէ յետոյ, եւ նուիրուին ուրիշ ժողանգաւոր ուսանողներ դաստիարակելու գործին:

Վարժարանիս դասացուցակը կարօտ է հիմնական վերանայման, քայլ պահելու համար արդի ժամանակներու հետ: Դասընթացքին մաս պէտք է կազմեն Հայերէն լեզուն եւ զրականութիւնը, պատմութիւնը, թուաբանու-թիւնը, գիտութիւնը, օտար լեզուները, բացի պարտադիր կրօնական դասա-նիւթերէն:

Մեր երիտասարդ ուսանողներուն լաւագոյն կրթութիւնը տալու համար պէտք ունինք վարժ դաստիարակներու օժանդակութեան: Ուրախ պիտի ըլլանք լսելու քարի տրամադրութիւնները դասախօսներու որոնք տրամադիր են ստանձնելու ուսուցչական պաշտօն մեր վանքին մէջ:

Անդրադառնանք նաեւ այն իրողութեան որ մենք պարտաւոր ենք նուազագոյն հանգստաւէտ պայմաններ ապահովել իրենց համար: Եւ հակառակ որ ներկայիս չունինք այդ դիւրութիւնները, բարեբախտաբար ունինք կարե-լիութիւնները եւ արդէն սկսած ենք անհրաժեշտ ծրագիրները մշակել:



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՆԱԶԱՐ

ARMENIAN PATRIARCHATE

№ 71-15

Թուակալմի
Date 22 Յունիս 1990

4) Վանքին Հին Տպարանը.-

Հայերը առջինն էին որ տպագրութեան արուեստը ներմուծեցին Երուսաղէմ, 1833-ին: Եւ այն շէնքը ուր այդ արուեստը կիրարկուեցաւ տակաւին կանգուն է: Նախապէս այդ տեղը զործածուած է իբրեւ "Քարվանսարա", ուր Երուսաղէմ ուխտի եկողներուն ձիերը եւ ուղտերը կը պատսպարուէին: Բացի մանր փոփոխութիւններէն, տակաւին այդ տպաւորութիւնը կը թողու շէնքը:

Հազարներով հատորներ այս կամարներուն ներքեւ դիզուած են իրարու վրայ, փայտեայ դարակներու մէջ եւ ամենուրեք: Իսկ մէկ մասը շէնքին աղբանոցի էր վերածուած: Մեր երիտասարդ միաբաններէն մէկը նշանակեցինք, որ ժառանգաւոր սաներու օգնութեամբ մաքրէ եւ կարգի դնէ: Եաքախներ առաւ աղբերը մաքրելու աշխատանքը: Հիմա քիչ մը կարգի մտած է: Նոյն կացութեան մէջ էր շէնքի մուտքին եղող տեսչարանը, ուր 1940-ին մի քանի տարի տպարանի տեսչութիւնը եւս վարած էինք մենք:

Դժբախտաբար, ներկայ գոյից ցուցակագրութիւնը գոյութիւն չունի: Եւ հակառակ որ ժամանակ սպառող աշխատանք մը պիտի ըլլայ, նշանակուած ան-
ձերը այդ աշխատանքին եւս լծուած են:

Այս հնամենի շէնքին մէջ, որուն մէկ թեւին մէջ տակաւին երկու գրաշարներ ձեռքով կը էջադրեն մետաղէ հայկական տառերը, մեր փափաքն է հաստատել գրախանութ մը, յուշանուէրներու քաժինով, եւ կազմատուն մը յարակից գործիքներով:

Նոյն առեն ունինք երկրորդ տպարան մը Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանի մէկ ներքնասրահին մէջ, ուր նաեւ փոխադրուած է վանքին խոհանոցը: Այս Տպարանին մէջ ունինք արդիական տպագրիչ մեքենաներ, չորս գոյնով տպագրութեանց համար, եւ "Քրմբիւթըր" ու ձեռագիրները էջադ-
րող գրամեքենայ: Արդէն իսկ կ'օգտագործուի տպարանը Պատրիարքարանի համար եկամտաբեր գործեր եւս ստանձնելով: Այստեղ կատարուած աշխատանքները գոհա-
ցուցիչ կը թուին, ուստի աւելի ետքի կը թողունք զբաղիլ ներքին կարգաւորու-
թեամբ:

5) Պատրիարքարանի գրասենեակներ.-

Պատրիարքարանը չունի քաւարար գրասենեակներ իր վարչական գործերը կարգաւորելու համար: Երեք-չորս սենեակները որ կան հեռու են Պատրիարքարանի նման կարեւոր հաստատութեան մը վարչական քաժանմունքներուն քաւարարութիւն տալու:



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿՈՒՆ ԿԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ 71-15

Թվական
Date

22 Յունիս 1990

Ուրիշ երկու սենեակներու մէջ դիզուած էին տարիներով լքուած գոյքեր, զիրքեր, թղթածրարներ եւ սնտուկներ: Այս բոլորը պէտք էր մաքրագործուէին: Ներքին պատերուն նորոգութիւնը, ելքերական քայքայուած թելերուն փոփոխութիւնը անհրաժեշտ էր: Հեռախօսի եւ "ֆաքս" գործիքի զիծեր պէտք էր հաստատուէին: Դարակներու մէջ գտնուած մուկի սատակներ, քայքայուած սալաշատակներ, անհրաժեշտ դարձուցին ամբողջական նորոգութիւնը այս սենեակներուն:

Դիւրին չէր նաեւ վանքին մէջ տեղ գտնել սենեակներու սէջի գոյքերը ապահով փոխադրելու եւ տեղաւորելու: Այդպիսի նպատակի համար յարմար վայրերէն մէկն էր լքուած ու քայքայուած ին փուղը վանքին: Պէտք էր զայն մաքրէինք, ծնփէինք, սալաշատակէինք: Գոնէ առժամեայ կայան մը ունեցած կ'ըլլանք մէկտեղելու ցրուած գոյքն ու թղթածրարները արձանագրութեանց:

Վերոյիշեալ բոլոր մաքրագործումները, աղբահաւաքը եւ ծրագրումները, ովկիանոսին մէջ ծփացող իսկայ սառնակոյտին զազաթի երեւցող մասն է միայն: Ուրիշ անմիջական եւ գործնական կարգադրումներ եւ ծրագրումներ փոքրիկ մէկ մասն են կատարուելիք անթիւ ձեռնարկներու եւ կարգադրութիւններու:

Կը յուսանք պարբերաբար տեղեակ պահել ձեզ այստեղ կատարուող անցուդարձերէն:

Ձեր աղօթքը կը խնդրենք որ Աստուած օրհնէ մեր ջանքերը:

Սիրոյ ողջունիւ,

Թորգոմ Արքեպս. Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿՈՒՆ

ARMENIAN PATRIARCHATE

№ PV/R-006

Թվական
Date 6 Սգոստոս 1990

Սիրելի Միաբանակից եղբայրներ,

Ժանի մը շարքներ առաջ, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան իրաց կացութեան մասին առաջին տեղեկատուութիւնն մը կատարեցինք: Այնտեղ յիշած էինք կարգ մը անմիջական կարիքներ, եւ միջոցառումներ զորս մտադիր էինք ձեռք առնել մասամբ զոհացնելու համար այդ կարիքները:

Պատրիարքարանիս անունով ցարդ կատարուած նախաձեռնութիւններէն ոմանք անմիջական իրազօրծումներու զոհունակութիւնը կը պատճառեն:

Այս կարծիք մասնակամիջոցին, գործադրուած որոշումները հիմնական նախքայլեր կը նկատենք համայնական եւ վանական մեր կեանքին կազմակերպման աշխատանքներուն մէջ:

1. Թղթածրարներու կեդրոնացման դրութիւն.

Անհրաժեշտ էր հաստատել Թղթածրարներու կեդրոնացման դրութիւն մը, զործնականօրէն իրար զօղելու գրասենեակներուն ներքին յարաբերութիւնը եւ կարգաւորումը: Այս դրութեան մէջ նկատի առնուած են Պատրիարքարանի ամենօրեայ գործունէութեանց ենթաբաժանումները: Ի հարկին կարելի է յաւելումներ եւ քարեփոխումներ կատարել: Թղթածրարները միակերպ դասաւորելու դրութիւն մը կիրարկուած կ'ըլլայ այս կերպով:

Պատրիարքարանի տարբեր բաժանումներն իւրաքանչիւրէն կ'ակնկալուի երկու յաւելեալ օրինակներ պատճենահանել. ստացուած եւ առաքուած Թղթակցութիւններէն, տրամադրելու համար Թղթածրարներու կեդրոնացման դրութեան: Իսկ այս դրութեան պատասխանատու պաշտօնեան, իր կարգին պիտի դասաւորէ մէկ օրինակը ընդհանուր ժամանակագրական Թղթածրարին մէջ, իսկ երկրորդ օրինակը՝ իւրաքանչիւր բաժանմունքին յատուկ Թղթածրարին մէջ:

2. Գրասենեակներ.

Սրբոց Յակոբեանց վանքի շրջափակին մէջ գտնուող եւ փակուած սենեակներէն ոմանք մաքրուեցան եւ նորոգուեցան: Այս սենեակներէն երկուքը պաշտօնական գրասենեակներու վերածուեցան Պատրիարքարանի միւս գրասենեակներու շարքին: Այնտեղ հաստատուեցաւ Պատրիարքարանի Տեղեկատու Դիւանը: Այս սենեակներէն մէկուն մէջ տեղաւորուած են Պատրիարքարանի ֆաքս գործիքը եւ կեդրոնական քրմութիւնը գրամբնեւում որ կարելիութիւնը ունի հետզհետէ իրարու կապելու միւս բաժանմունքներու մէջ հաստատուելիք գրամբնեւանքը: Երկու ֆաքս գործիքներու թիւերն են 9722-894861 Տեղեկատու Դիւանին համար, իսկ Պատրիարքի գրասենեակին մէջ՝ 9722-894862. Տեղեկատու Դիւանի հեռախօսի թիւն է 9722-894948:

Փոստարկ 14235 Հեռաւանդ 894866 Երուսաղէմ
P.O.BOX 14235 PHONE: 894866 JERUSALEM



ՊԱՏՐԻԱՐԽԱՐԿԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ PV/R-006

Թվական
Date

6 Օգոստոս 1990

3. Վերանորոգում հե վերակառուցում.

Սրբոց Յակոբեանց վանքն ներս գտնուող Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ վերանորոգման ծրագիրը զոհացուցիչ կերպով առաջ կը տարուի: Աշխատանքին ձեռնարկուած էր զրեթէ տարի մը առաջ, հսկողութեան ներքեւ Գեր. Տ. Կիրեղ եպս. Գաբրիելեանի, եւ յուսով ենք մի քանի ամիսէն վերակառուցումը աւարտելու:

Վերակառուցման այս աշխատանքի ընթացքին, հնազիտական կարեւոր րացայայտումներ կատարուեցան եկեղեցիին մէջ: Երբ աշխատուողներ կը բերթին պատերուն ձեփերը, երեւան ելան հայկական հին արձանագրութիւններ հաշարեր, որոնցմէ մէկը տասնըերեքերորդ դարէն կը թուի ըլլալ: Ուրիշ պատի մը ձեփերուն տակէն Մկրտութեան Աւագան մը յայտնուեցաւ, որուն թուակներ անյայտ է: Վերահաստատուած այս Աւագանին վրայ կը տեսնենք դարերէն եկող հայ քանդակագործի մը տպաւորիչ ձեռարուեստը:

Նշանակալից այս հնութեանց պատճառաւ, այն պատերը ուր հին արձանագրութիւն եւ խաչարար կը գտնուի պիտի չը ձեփուին, եւ այցելուներ, ուխտաւորներ, պիտի կարենան ականատես ըլլալ այդ հոգեզմայլ գեղեցկութեանց:

Գաւիթի պատերէն մէկուն մէջ գործածուած քարերու խաւերէն կ'ենթադրուի որ Առաջին Դարէն մնացորդներ են:

Այս իրողութիւնը մեր եկեղեցիին համար յատուկ նշանակութիւն մը ունի: Կարգ մը մասնագէտներու կարծիքով, այդ պատը կրնայ մաս կազմած ըլլալ Կայիափա Քահանայոյտի քանդակարին, որ աւանդաբար կը տեղաւորուի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ ըսկին մէջ:

4. Եինարարական ծրագիրներու ձևիչ.

Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տնօրէն Ժողովին հետ խորհրդակցաբար հաստատած ենք Պատրիարքարանի մի քանի շինարարական ծրագիրները: Ասոր իբրեւ հետեւանք ապահոված ենք ծառայութիւնը ճարտարագէտ հսկիչի մը որ պիտի օժանդակէ այն ճարտարապետներուն որոնց հետ համաձայնութիւններ պիտի կնքենք: Ան պիտի կատարէ վերահսկողութիւնը բոլոր շինարարական գործերուն որոնք Պատրիարքարանի ծրագիրներուն մաս կը կազմեն:

5. Տեղեկատու Դիւան եւ օտար թերթեր.

Պատրիարքարանի Տեղեկատու դիւանը իր յարաբերութիւնները կը շարունակէ պահել տեղական եւ արտաքին թերթերու թղթակիցներու հետ, որոնցմէ շատեր անբաւարար ծանօթութիւն ունին Հայ համայնքին հե մեր եկեղեցւոյ մասին: Տեղեկատու Դիւանը թղթակցութիւններ ղրկած է եւ տեղեկատուութիւն կատարած է մեր համայնքի կացութեան, մեր եկեղեցւոյ եւ կրթական հաստատութիւններու, մշակութային ձեռնարկներու եւ աւանդութիւններու մասին: Այս թղթակցութիւնները ղրկուած են տարրեր երկիրներ թիւններու մասին: Եւ տպագրուած են բազմաթիւ թերթերու մէջ, թէ՛ Հայ եւ թէ օտար խմբագրուած պատկանող:

Փոստարկ 14235 Հեռազան 894866 Երուսաղէմ
P.O.BOX 14235 PHONE: 894866 JERUSALEM



ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ PV/R_006

Թվական 6 Օգոստոս 1990
Date

Տեղեկատվության ցանկին մէջէն մի քանի յատկանշական երեւոյթներն են, Մայիս 15, 1990-ին Պատրիարքարանին մէջ պաշտօնական արարողութիւնը որով ընթացքին Կրօնից Նախարարը Երուսաղէմի Հայ Պատրիարքին յանձնեց իր ընտրութեան ժառանգական պաշտօնագիրը: Նաեւ նկարչական արուեստի ցուցահանդէսը որ կազմակերպուած էր Հելէն եւ Եղուարդ Մարտիկեան Հայ Արուեստի եւ Մշակոյթի Թանգարանին մէջ, ուր Յունիս 22-29 շաբաթամիջոցին ցուցադրուեցան Սովետական Հայաստանէն արուեստագէտ ֆելիքս Եղիազարեանի գործերը: Իսկ Յունիս 30ին, Երուսաղէմի Սինեմաթէք Հաստատութեան սրահին մէջ ներկայացուեցաւ "Ռէպի Հայաստան" շարժանկարը, պատրաստուած Թէոդոր Գողոսեանի կողմէ: Այս շարժանկարին ցուցադրումը պետական հեռուստատեսիլի յայտագիրի իբրեւ մաս մերժուած էր հեռուստատեսիլի պատասխանատու վարիչներու կողմէ: Սինեմաթէքի ընկերութեան կողմէ ցուցադրութեան առիթով ուրիշներու կարգին մեզի հետ խօսք առին Երուսաղէմի քաղաքապետ Թէտի Բօլէք եւ Սիւրբաբի տիկինը՝ հայածնունդ եւ մարդկային իրաւանց ջատագով Հլենա Գոնէր:

6. Մշակութային հետաքրքրութիւններ.

Հայեր մշակոյթ սիրող ժողովուրդ են: Անոնց վերապրելու գլխաւոր ազդակներէն մէկը կենսաոռոյջ մշակոյթի շարունակական յոսքն է իրենց կենցաղին եւ գործունէութեանց մէջ:

Երբք երիտասարդական ակումբները՝ Երուսաղէմացի Հայոց Բարեսիրական Միութիւն, Հայ Երիտասարդաց Միութիւն, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն, տւելի քան երկու սերունդներու փոխանցած են մշակոյթի ջանք: Կարժամանակ, երբ Երուսաղէմի մէջ ամէն շաբաթ հանրային հաւաքոյթ մը տեղի կ'ունենաւ: Տօնական օրերու հանդիսութիւններ, Տօնական շրջնաւարտութեան հանդէսներ, լեցուն յայտագիրներով՝ բեմադրական, "Չայնի եւ Լոյսի" խաղերով, նաեւ յամախակի մարզական ելոյթներ եւ մրցահանդէսներ: Մեր երիտասարդներուն մէջ գոյաւոր էր մրցանքի ոգին որ կը մղէր գանձը միշտ լաւագոյնին ձգտելու, եւ վառ կը պահէր ներքին կրակը եւ կորովը:

Մեր մտադրութիւնն է վերածարծել այդ աշխուժութիւնը գործակցութեամբ երբք երիտասարդական ակումբներուն: Անոնցմէ երկուրդ՝ ՀԵՄ եւ ՀՄԸՄ կը յրատարակեն իրենց պարբերաթերթերը՝ Հայերէնով, եւ երբեմն Անգլերէն յաւելուածով: Երուստղէմի Հայ Պատրիարքութեան Մշակութային Յանձնախումբ մը կազմեցինք իւրաքանչիւր ակումբէն ներկայացուցիչներով, գլխաւորութեամբ Դաւիթ Եպս. Սահակեանի եւ ատենադպրութեամբ Գուսան Վրդ. Ալմանեանի: Այս Յանձնախումբի նախաձեռնութեամբ տեղի ունեցան հետեւեալ ձեռնարկները.-

Ապրիլ 24-ի յուշահանդէսի յայտագիրները, երկու տարբեր երեկոյթներով, եւ Թափօրով երթը դէպի Արարայի յուշարժանը Հայկական գերեզմանատան մէջ:



ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

№ PV/K-006

Թվական
Date 6 Օգոստոս 1990

. Երկու երեկոյթներ Սուլետական Հայաստանէն երկու այցելուներու, Սփիւքաշայութեան հետ Մշակութային կապի Յանձնախումբի նախագահ տեղակալ Սպարտակ Պաղտասարեանի դասախօսութեան, եւ ասմունքող արուեստագէտ Վլատիմիր Ալաքեանի համար:

. Երաժշտական երեկոյթ մը Երեւանէն արտագաղթած տաղանդաւոր Յակոբեան ընտանիքի երեք անդամներով - Հայրը՝ Յովիկ, Կիօլա Նուազող, մայրը՝ Եւա, դաշնակահարուհի, եւ տասներօթը տարիկան դուստրը՝ Զրիստին, չուսակահար:

. Սուլետական Հայաստանէն եկած երկու բժիշկներու հետ հանդիպում մը, որոնք եկած էին իրենց մասնագիտութիւնը զարգացնելու 1988-ի երկրաշարժէն աղետեալներուն օգնելու իրենց պարտականութեանց մէջ:

7. Ժառանգաւորաց Վարժարան - Նոր Զեռնարկներ.

Ալեքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարանի աշակերտներուն պատեհութիւն տալու համար որ ամառուան իրենց արձակուրդի օրերը օգտակարապէս գործածեն, եւ իրենց մէջ կանուխէն արթնցնելու համար արուեստներու զննատանքի զգալնութիւնը, երկու նոր յայտագիրներ գործադրութեան ղրուեցան: Մէկը՝ երաժշտական, միւսը՝ ձեռարուեստի:

. Վարժարանի բոլոր աշակերտները դաշնամուր նուագելու դասեր կ'առնեն, եւ նոյն ատեն կը ծանօթանան սոցոցով տախտակի վրայ գործելու ձեռարուեստին:

Գործիական երաժշտութեան յայտագիրը կը յիշեցնէր առաջին դասերը, որոնք ներմուծուած էին վարժարանի դասընթացին մէջ 1957 թուականին:

Ներկայիս չորս հայ երաժիշտներ պաշտօնի կանչուած են: Ասոնցմէ երեքը՝ Վահէ Գալայմեան, Գէորգ Սանտրունի եւ Օհան Հալէպլեան, Երուսաղէմի մեր համայնքին անդամներէն են, իսկ չորրորդը՝ Եւա Յակոբեան, Երեւանէն փոխադրուած ընտանիքի երեք անդամներէն մէկն է:

Տախտակի վրայ ձեռարուեստի դաստիարակը՝ Գէորգ Տօնիկեան, Երուսաղէմի մեր համայնքէն է, եւ իր ուսումը առած է Երեւանի մէջ: Աշակերտներ մեծ հետաքրքրութեամբ կը քննեն հետեւիլ եւ լաւ գործեր արտադրել: Մի քանի ամիսէն կը ծրագրեն ցուցադրել այդ աշխատանքները:

Աշակերտներուն ֆիզիքական առողջութիւնը եւս տպահովելու դիտումով մարզական, յայտագիրներ կազմուած են, եւ ամէն շաբաթ միօրեայ պոլոսներով առիթ կունենան Սուրբ Երկրի տարբեր տեսարժան վայրերը այցելելու:



ՊԱՏՐԻԱՐԻԱՐԿԱՆ ՆԱԶԱՐ

ARMENIAN PATRIARCHATE

.17

FV/R-006

Քաղաքական
Date

6 Օգոստոս 1990

Ց. Երզնգյիկ խումբ.

Մշակութային Ցանձնախումբի գործունեության մաս կը կազմէ երզնգյիկ խումբի կազմութիւնը, որուն նպատակն է սորվեցնել "Կոմիտասի Պատարագը" եւ Հայ ժողովրդական երգեր:

Եւրոպական այս երգի փորձերուն կը մասնակցին գործաւոր դասակարգի աշխատողներ, տնտեսիկներ եւ պատանիներ: Ղեկավարութեամբ ղարապետ Սահակ Գալաթեանի եւ օգնութեամբ Գուսան Վրդ. Ալմանեանի, երզնգյիկ խումբի անդամները կը ծոխացնեն իրենց ծանօթութիւնը եկեղեցական երաժշտութեան եւ մեր ազգային ժողովրդական երգերու մասին:

Սիրոյ ողջունիւ

Քորգոմ Արք. Մանուկեան
Պատրիարք Երուսաղէմի

Փոստարկ 14235 Հեռախոս 894866 Երուսաղէմ
P.O.BOX 14235 PHONE: 894866 JERUSALEM